# ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԸ ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄԱՐԳԱՐԵԻ ՄԱՍԻՆ

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեն ծնվել է 570 թ. Մեքքայում, սերում է Հաշեմյանների տոհմի կուրայշ ցեղից: Նրա կենսագրության լավագույն աղբյուրն է 9-րդ դարի հայտնի մահմեդական մատենագիր Իբն Հիշամի (մահ. է 834-ին) «Վարք մարգարեական» (ալ-Սիրա ալ-Նաբավիյա) աշխատությունը[1], որը գրվել է Մուհամմադի կենսագիր Իբն Իսհակի (704-767) աշխատության հիման վրա: Մուհամմադի կյանքն ու կրոնական գործունեությունը եղել է նաև հայ միջնադարյան պատմագիրների ուշադրության կենտրոնում: Նրանց հաղորդած տեղեկություններն ամբողջացրել է արևելագետ Ա. Մելքոնյանը[2]: Խնդրին անդրադարձել է նաև հետազոտող Ա. Թումանյանը: Վերջինս նշում է, որ հայ միջնադարյան պատմագիրները Ղուրանի ու դրա հեղինակի հանդեպ ունեին երկակի վերաբերմունք: Ավելի վաղ շրջանի ներկայացուցիչները Մուհամմադի ու նրա ուսմունքի մասին արտահայտվում էին չափազանց հանգիստ, քանի որ իրենց նվաճումների ընթացքում արաբները կրոնական հանդուրժողականության քաղաքականություն էին վարում զավթված երկրների այլակրոն բնակչության նկատմամբ, և այդ ժամանակ «Ղուրանը իր բոլոր մանրամասնություններով դեռևս լայն զանգվածներին հայտնի չէր»[3], և հեռավոր Հայաստանում հայերը գիտեին, որ Մուհամմադի օրենքով սահմանվում էր. «Չուտել լեշ և չըմպել գինի և սուտ չխոսել»[4]: Դրանք արգելքներ էին, որոնք վերագրվել են նաև քրիստոնյաներին: Հետազոտողը գտնում է, որ 7-րդ դարի հայը, որը եղել էր հեթանոս Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ, պետք է արաբների մեջ տեսներ նվաճողների, որոնք «ազգակից էին աստվածաշնչյան կրոնին»: Սակայն, ավելի ուշ՝ Աբբասյանների օրոք, երբ փոխվեց նվաճողների վերաբերմունքը այլակրոնների հանդեպ, «հայերը դադարեցին իրենց նվաճողներին վերաբերվել նախկին համակրանքով»[5], և դա ազդեց նաև Մուհամմադի ու նրա կրոնի մասին

[1] Տե՛ս **Abd el-Malik Ibn Hisham,** Das Leben Muhammed's nach Muhammed Ibn Ishak, Bd 1-2, Göttingen 1858-1860:

[2] Տե՛ս **Мелконян А.** Армянские средневековые источники об арабском халифате (VII-VIII вв.). Дисс. на соиск. уч. степени канд. историч. наук. Ер., 1990:

[3] **Туманян А.** Сообщения старинных армянских писателей о Мухаммеде, М., 1913, с. 2.

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

հայ մատենագիրների վերաբերմունքի վրա:

Այսպես, տեղին է նշել արևելագետ Ա. Տեր-Ղևոնդյանի այն տեսակետը, որ գործնականում Մուհամմադի մասին մեզ հասած գրավոր առաջին հիշատակումը համաշխարհային պատմագրության մեջ պատկանում է Սեբեոսի գրչին[6]: Սեբեոսը գրում է. «Յայնմ ժամանակի այր ոմն … յորդւոցն Իսմայելի, որում անուն էր Մահմէտ, թանգար, որպէս ի հրամանէն Աստուծոյ երևեալ նոցա քարոզ՝ ճշմարտութեանն ճանապարհ զԱբրահամեանն ուսուցանէր նոցա ճանաչել զԱստուած, մանաւանդ զի հմուտ և տեղեակ էր Մովսիսական պատմութեանն»[7]: Պատմագիրը նշում է, որ թողնելով ունայն պաշտամունքը՝ արաբները դարձան առ կենդանի Աստված: Սեբեոսի՝ իսլամի նկատմամբ ունեցած զուսպ և անտարբեր վերաբերմունքը պրոֆ. Ա. Կոզմոյանը բացատրում է հետևյալ կերպ. «Դա արդյունք էր նախ՝ իսլամի միաստվածական գաղափարի հետ քրիստոնեական մտքի ընդհանրության, ինչպես նաև Մուհամմադի քարոզներում այլադավանների նկատմամբ ունեցած հանդուրժողականության»[8]: Դատելով Սեբեոսի այս տեղեկություններից, ամենայն հավանականությամբ, 7-րդ դարում հայ իրականության մեջ արդեն տարածված էին զրույցներ Մուհամմադի մասին: Անմիջական շփումների արդյունքում միջնադարյան Հայաստանում ձևավորվել էին որոշակի պատկերացումներ իսլամի մասին, որոնք, սկսած 7-րդ դարից, արտացոլվեցին հայ մատենագիրների երկերում[9]: Հենց ամենասկզբից Մուհամմադին քրիստոնեական աշխարհը համարել է կեղծ մարգարե: Այս իրողության վրա էին հենվում հայ հեղինակները իրենց երկերում՝ անդրադառնալով նրա կրոնական գործունեության առանձին դրվագների և օգտագործելով քրիստոնեական միջավայրում տարածված Մուհամմադի մասին զրույցներն ու լեգենդները: Դրանք վերաբերում են Մուհամմադի կենսագրության (սիրա նաբավիյա) մասին մահմեդական պատմական աղբյուրներին[10]: Հայ մատենագիրները հատկապես մեծ ուշադրություն են դարձրել Մուհամմադ մարգարեի հանդիպումներին ճգնավոր Սարգիս Բահիրայի[11] հետ: Այս մասին հիշատակում է 10-րդ դարի հայ պատմագիր Մովսես Կաղանկատվացին: Նա գրում է, որ Սասանյան Պարսկաստանի թուլացման շրջանում «Մահմեդ անունով մի մարդ հայտնվեց»: «Սա ապրում էր անապատում և դիվական հոգով, վայրագ աղեղնավոր մի մարդ էր»: Բահիրան սովորեցնում է նրան «Հին ու Նոր կտակարաններից՝ ըստ Արիոսի, որն

---

[6] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Հոդվածների ժողովածու, Եր., 2003, էջ 370:

[7] «Պատմութիւն Սեբէոսի», Եր., 1979, էջ 135:

[8] **Ա. Կոզմոյան**, Ղուրանը հայոց մեջ, Եր., 2003, էջ 15:

[9] Տե՛ս **Мелконян А.**, նշվ. աշխ., էջ 15:

[10] Տե՛ս նույն տեղը, էջ 16:

[11] Բահիրա-քրիստոնյա վանական սիրիական Բուսրա քաղաքից (տե՛ս «Ислам: Энциклопедический словарь», М., 1991, էջ 39):

աստծու որդուն աստված է համարում»[12]: Անշուշտ պատմագիրը նկատի է ունեցել այն հանգամանքը, որ միջնադարյան արաբները բնակվում էին գլխավորապես անապատային շրջաններում և վաչկատուն, քոչվոր կյանքով էին ապրում: Այն, որ Մուհամմադը, ըստ պատմագրի, օժտված էր դիվական հոգով, ամենայն հավանականությամբ մատնանշում էր նրա կապը գերբնական աշխարհի հետ: Ըստ մահմեդական պատմական ավանդության՝ Մուհամմադի հակառակորդները պնդում էին, որ նա դիվահար է (մաջնուն)[13]: Խնդրի գիտակները փաստում են, որ Ալլահը զրուցում էր նրա հետ «հոգու» միջոցով, որին Մուհամմադը պատկերացնում էր հրեշտակի տեսքով և անվանում Գաբրիել, իսկ միջին դարերում և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի երկրներում կարծիք էր ձևավորվել, որ նման մարդիկ դիվահար են[14]:

Բահիրան հորդորում է Մուհամմադին այդ մասին պատմելու «վայրենաբարո արաբներին», և որ «ոչ ոք չիմանա իր տեղը»: Եվ արաբները, ըստ պատմագրի՝ «անգետ, հեթանոս ու կեղծավոր այդ ցեղը զարմացած էր մնացել հրաշախոսության պատճառով»[15]: Ըստ հետազոտողների՝ այդ շրջանում Մուհամմադի գիտակցության մեջ ձևավորվում էին հանդիսավոր խոսքի առաջին ռիթմիկ դրսևորումները, որոնք հնադարյան ժողովուրդները հրաշք էին համարում՝ ծնված ոչնչից և որպես հզոր ուժի ազդեցություն[16]: Մուհամմադը, ըստ պատմագրի, համոզում է մարդկանց, որ հրեշտակն է խոսում իր հետ, և, վախենալով բացահայտումից, «սպանում է չար ուսուցչին և ավազաթաղ անում»՝ հայտարարելով, որ այդտեղ է իրեն հայտնվում հրեշտակը[17]:

Մահմեդական պատմագիրները այլ կերպ են ներկայացնում Մուհամմադի հանդիպումները վանական Բահիրայի հետ, որը նրա մեջ ճանաչում է ապագա մարգարեին: 10-րդ դարի մահմեդական պատմագիր ալ-Տաբարին գրում է, թե ինչպես Բուսրա քաղաքում Բահիրան դիմավորեց Մուհամմադին, նկատեց նրա ուսերի վրա մարգարեության կնիքը և հայտարարեց, որ նա երկու աշխարհների տիրոջ առաքյալն է[18]: Այն, որ մահմեդական պատմագրության այս տեղեկությունները չեն համընկնում Մովսես Կաղանկատվացու ասածներին, ոչ միայն հայ միջնադարյան մատենագիրների, այլև Մուհամմադի կողմից առաջ քաշած կրոնական գաղափարախոսության նկատմամբ Հայոց եկեղեցու անհաշտ վերաբերմունքի արդյունքն էր: Այս կապակցությամբ հե-

---

[12] **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 223-224:

[13] Տե՛ս **Грюнебаум фон Г. Э.** Классический ислам. Очерк истории (600-1258), М., 1986, էջ 32:

[14] Տե՛ս **Массэ А.** Ислам, М., 1963, էջ 70:

[15] **Մովսես Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 224:

[16] Տե՛ս **Большаков О**. История Халифата (570-633). Т. I, М., 1989, էջ 71:

[17] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 224:

[18] Տե՛ս **Tabari Aby Dafar,** Tarikh al-rusul wa al-muluk, vol II, Kahira 1990, 1124/1:

տաքրքիր է հիշատակել 15-րդ դարի բավարիացի զինվոր Յ. Շիլտբերգերի ուղեգրությունը, որտեղ հեղինակն անդրադառնում է հայկական միջավայրում Մուհամմադի մասին տարածված զրույցներին և նշում, որ առևտրական գործերով Եգիպտոսում գտնվող Մուհամմադը հանդիպել է մի հոգևորականի (ակներևաբար՝ Բահիրայի) հետ, որը նրա մեջ ճանաչել է նոր կրոնի առաջնորդին և խնդրել նրան նեղություն չտալ իր համերկրացիներին՝ հայերին[19]:

Մովսես Կաղանկատվացին հաղորդում է նաև պատմական հավաստի տեղեկություններ Մուհամմադի գաղթի մասին դեպի Մադինա քաղաքը, համառոտակի հիշատակում այստեղից նրա կատարած ասպատակությունները դեպի Մեքքա և այն գրավելը[20]:

9-10-րդ դարերի պատմագիր Թովմա Արծրունին, մանրամասնորեն անդրադառնալով Մուհամմադի վերաբերյալ կենսագրական անցքերին, նշում է, որ ծնողների մահից հետո Մուհամմադին իր խնամակալության տակ է վերցնում պապը՝ Աբու Տալիբը, այնուհետև հիշատակում է նրա ամուսնության մասին Խադիջայի հետ, իսկ երբ Մուհամմադը առևտրական գործերում դարձել է հմուտ, մեկնել է Եգիպտոս և այնտեղ «հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց»[21]:

Բահիրան, ըստ պատմագրի, Մուհամմադին առաջարկեց հետևել իր ուսմունքին ու դառնալ մեծ զորապետ՝ հիշեցնելով Իսմայելի մասին Աստծո խոստումը Աբրահամին: Պատմագիրը հիշատակում է Մուհամմադի տեսիլքների մասին, որ մի օր «ի գալ նորա նմանէն ձայն օտարոտի, և ազդումն ահագին և դիւական անկեալ ի վերա նորա՝ ուշաթափ անկեալ դնէր»[22]:

Ուշաթափությունից ուշքի գալով՝ նա իր ուղեկիցներին պատմում է, որ հրեշտակի ահավոր ձայնը հրամայել է իրեն գնալ իր ժողովրդի մոտ որպես մարգարե, ներկայացնել Աստծուն՝ որպես երկնքի և երկրի արարիչ, «և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել»: Մուհամմադը այդ մասին հայտնում է իր հորեղբորը՝ Ապոջեհրին[23]: Ըստ պատմագրի՝ Մուհամմադը հավատում էր իր մարգարեական առաքելությանը «թերևս թոյլ տալովն Աստծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանալն ի մտաց»[24]:

Ըստ մահմեդական ավանդության՝ Մուհամմադին մանկուց էին

---

[19] Տե՛ս **Գ. Արգարյան**, Հայերը Շիլտբերգերի ուղեգրությունում // Բանբեր Երևանի համալսարանի, № 2(92), 1997, էջ 108:

[20] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, նշվ. աշխ., էջ 226:

[21] «Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 170:

[22] Նույն տեղում:

[23] Վերջինիս անունը Համզա իբն Աբդուլ-Մուտալիբ էր, որը Մուհամմադի կողմից ստացել էր Աբու Ջահլ մականունը (տե՛ս **Большаков О.**, նշվ. աշխ., էջ 76):

[24] **Թովմա Արծրունի,** նշվ. աշխ., էջ 170:

ծանոթ տեսողական և լսողական տեսիլքները: Իսկ արդեն 610 թ., երբ նա աղոթքի համար առանձնացել էր Հիրա լեռան անձավներից մեկում, նրան հոգի երևաց (հետագայում՝ Գաբրիել - Ջաբրայիլ) և մեկնելով մի մատյան՝ հրամայեց կարդալ[25]: Ըստ հետազոտողների՝ Մուհամմադին տեսիլքներ են հայտնվել հիմնականում իր մարգարեական գործունեության առաջին տարիներին, և այդ կապը գերբնական աշխարհի հետ սահմանափակվել է խոսքային շփումով[26]: Ըստ 20-րդ դարի հոգեբանական հետազոտությունների՝ երբ մարդիկ խորապես ներփակվում են իրենք իրենց մեջ, պարզորոշ տեսնում են տեսիլքներ: Ըստ պրոֆեսոր Ա. Կոզմոյանի դիտարկման՝ «Եթե այս ամենին ավելացնենք նաև միջնադարյան մտածողի կրոնական ներշնչանքը, ի վերուստ տրված հզոր ինքնասևեռումը, մոլեռանդ բարեպաշտությունը, խորը հավատավորությունը… ապա հասկանալի կդառնա Մուհամմադի այն զերզգայական վիճակը, որի պահերին նա ոգիների միջոցով կամ անմիջականորեն իր քարոզները ստանում էր երկնային ամենաբարձր ատյանից, հոգեպայծառացման պահերին, հարթմնի և տեսիլքային «հանդիպումների» ժամանակ»[27]:

Մահմեդական աղբյուրները հավաստում են, որ Մուհամմադի մարգարեական առաքելությանը հավատացին նաև նրա կին Խադիջան և վերջինիս ազգականը՝ Վարական, որից էլ Մուհամմադը ստացել էր իր գիտելիքները Սուրբ Գրքի և Թալմուդի մասին[28]: Թովմա Արծրունու պատմության մեջ տեղ են գտել նաև պատմական մի շարք իրողությունների մասին հիշատակություններ: Այսպես, ըստ մահմեդական աղբյուրների, Մեքքայում հեղինակություն վայելող կուրեյշ ցեղի վերնախավը չէր ընդունում Մուհամմադի գաղափարները, համարում էր նրան դիվահար և ցնորված[29], սակայն երբ Մուհամմադը սկսեց բացահայտորեն քարոզել և պնդել, որ նրանց հայրերն ու նախնիները վառվում են դժոխքի կրակներում, նրա նկատմամբ սկսվեցին հալածանքներ և Մուհամմադը իր համակիրների հետ հեռացավ Մադինա քաղաքը: Պատմագիրը հիշատակում է այդ վեճի մասին, «Եղև աղաղակ մեծ ի միջի նոցա և կռիւ այնքան, մինչև բազումք ի նոցանէ ի սուրս դիմեցին»: Մուհամմադը և զինակիցները պարտություն կրեցին, «փախստական եղեալ Մահմետն Ալի … եկին ի քաղաքն Մադիամ»[30]:

Թովմա Արծրունին նշում է, ամենայն հավանականությամբ հիմք ընդունելով մահմեդական միջավայրում տարածված զրույցները, թե ինչպես Մադինայում բնակվող հրեաները որոշեցին միաբանվել Մու-

---

[25] Տե՛ս **Abd el-Malik Ibn Hisham**, նշվ. աշխ., band I, էջ 152-153:
[26] Տե՛ս **Грюнебаум фон Г. Э.**, նշվ. աշխ., էջ 29:
[27] **Ա. Կոզմոյան**, նշվ. աշխ.. էջ 29:
[28] Տե՛ս **Abd el-Malik Ibn Hisham,** նշվ. աշխ., էջ 153-154:
[29] Տե՛ս **Панова В.**, **Вахтин Ю**. Жизнь Мухаммада, М., 1990, էջ 195:
[30] **Թովմա Արծրունի**, նշվ. աշխ., էջ 172:

համմադի հետ՝ կնքելով հաշտության ուխտ[31]: Այստեղ խոսքը ակներևվաբար, այսպես կոչված, «Մադինայի կանոնադրության» մասին է, որը կազմվել է 622-623 թթ., կնքվել Մուհամմադի ու Մադինայում բնակվող հրեաների միջև, որի մասին վկայում է մուսուլմանական պատմագրությունը[32]: Թովմա Արծրունին վկայում է նաև Մուհամմադի կողմից Մեքքայի (Փառան) գրավման մասին, երբ «… Հրեայք հանդերձ Իսմայէլայովք և եղեն բանակ մեծ, և ելեալք ի վերաց Փառանս՝ արարին մեծ խորտակումն դիմադարձացն», կործանեցին այնտեղի կռատանը դրված կուռքերի արձանիկները, «յանդգնեցան ասել մեհեան՝ տուն Աբրահամու»[33]: Հետաքրքիր է նշել, որ ըստ Թովմա Արծրունու՝ մահմեդականները միավորվում են հրեաների հետ՝ գրոհելու Մեքքայի վրա, մինչդեռ մահմեդական պատմագրության մեջ հիշատակվում է Մուհամմադի գլխավոր ախոյանին՝ Աբու Սուֆյանին, հրեաների աջակցության փաստը: Այդ հրեաներին, ըստ պատմագրի, Մուհամմադը վտարել էր Մադինայից[34]: Մուհամմադը Մեքքայում Աբու Սուֆյանի հետ պայմանագիր կնքեց, համաձայն որի՝ նոր կրոնը հեթանոսականին հավասար իրավունքներ ստացավ: Այնուհետև Մուհամմադը իրեն հռչակեց առաջնորդ և հրեաներին օգնելու համար պատգամ հղեց Հերակլ կայսեր եղբորը՝ Թեոդորոսին, որ «զերկիրդ զայդ Աբրահամու խոստացա Աստուած և զաւակի նորա», և որ իրենք էլ են Աբրահամի զավակները, «տուք ի մեզ զերկիրդ մեր խաղաղութեամբ, ապա թե ոչ առցուք պատերազմաւ»[35]: Այս մասին հիշատակում է նաև Սեբեոսը, միայն այն տարբերությամբ, որ հրեաներն են պատգամ հղում Հերակլ կայսերը[36]: Թովմա Արծրունին գրում է պարսիկ կրոնավորի՝ Սալմանի[37] մասին, որին հիշատակում են նաև մուսուլմանական աղբյուրները: Ըստ պատմագրի՝ «դեպ եղև նմու ճանապարհա գալ ի քաղաքն Մադիամ, էր և ծանօթ գիտութեան գրոց, թէպէտ և ոչ կատարելապես»[38]: Մուհամմադը, տեսնելով նրան, հրամայեց գրել «գիրս օրինաց ազգին իւրոյ» Աբու-Թուռաբ[39] իսմայելացու ձեռքով: Սալմանը գրեց, «գիրս յօդուածոյս, ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք»: Այդտեղ նշվում է, որ Քրիստոսը Մուհամմադին՝ որպես մարգարեի, խոստացել է ուղարկել իր աշակերտներին, «հեծեալ մի իշոյ և հեծեալ մի ուղտու՝ զայս ա-

---

[31] Տե՛ս նույն տեղը:

[32] Տե՛ս **Abd el-Malik Ibn Hisham,** նշվ. աշխ., էջ 341-344

[33] **Թովմա Արծրունի,** նշվ. աշխ., էջ 172:

[34] Տե՛ս **Abd el-Malik Ibn Hisham,** նշվ. աշխ., էջ 669.

[35] **Թովմա Արծրունի**, նշվ. աշխ., էջ 173:

[36] Տե՛ս «Պատմութիւն Սեբէոսի», էջ 136:

[37] Վերջինս ազատագրված պարսիկ ստրուկ էր, որն իսլամ էր ընդունել (տե՛ս **Большаков О.**, նշվ. աշխ., I, էջ 132):

[38] **Թովմա Արծրունի**, նշվ. աշխ., էջ 174:

[39] Աբու-Թուռաբը 4-րդ արդարադատ խալիֆա Ալի իբն Աբու Տալիբն է, որին վերագրվում է նաև Ղուրանը շրջանառության մեջ դնելը (տե՛ս **Ղևոնդ,** Պատմություն, Եր., 1982, էջ 152):

մենայն ինքը յարակցէր»[40]: Փաստենք, որ Սալմանի ու Աբու-Թուռաբի կողմից Ղուրանը գրելու փաստը հիշատակվում է նաև Ղևոնդի պատմության մեջ, Բյուզանդիայի Լևոն Գ կայսեր՝ (717-741) Օմար Բ (717-720) խալիֆային հղած նամակում[41]:

Հարցի գիտակ Կ. Եզեանցն էլ գրում է, թե քանի որ հրեաները սպասում էին Փրկչի գալստյանը, «իսկ Քրիստոս խոստացաւ, թէ առաքելոց է Հայր զմխիթարիչն, որ ուսուցէ զամենայն», Մուհամմադը «յղացաւ խորհուրդ … թէ ինքն իսկ իցէ այրն, որում կայ մնայ աշխարհ՝ ուսուցանել ի նմանէ»[42]: Մուհամմադի գործունեությանը անդրադարձել է նաև 13-րդ դարի պատմագիր Կիրակոս Գանձակեցին, որը օգտվել է Թովմա Արծրունու պատմությունից[43]: Անանուն զրուցագրի (10-11-րդ դարեր) պատմության մեջ Մուհամմադի մասին տեղեկությունները ներկայացված են հիմնականում աղճատված, պահպանված չէ պատմական իրադարձությունների ժամանակագրական կարգը, պատմական դեմքերն ու նրանց արարքները (այդ թվում՝ Մուհամմադի) առասպելական բնույթի են, ինչպես օրինակ՝ Մուհամմադի գերզգայուն հոգեկան վիճակի նկարագրությունը տեսիլքներ տեսնելու պահին, Սարգիս Բահիրայի մասին հիշատակությունը, ըստ որի՝ նա «հմուտ էր դեւերի արհեստի, դիւթելու եւ կախարդելու մէջ» [44], որի մոտ Մուհամմադը ապրեց 23 տարի և այլն: Նկատելի է նաև պատմական մի շարք եղելությունների խառնաշփոթ, ինչպես օրինակ՝ Մուհամմադի ծննդյան ու սկզբնական գործունեության տեղափոխումը Արաբական թերակղզուց Պարսկաստան, որտեղ նրա դեմ է դուրս գալիս Խոսրով (Քարսէ) թագավորը, և որ հետո Մուհամմադն ու Ալին «… դուրս եկան Պարսից աշխարհից ու եկան բնակուեցին Բաբէլացոց երկրում», որ Մուհամմադը Եփրատ գետի ափին սկսեց Բաղդադի շինարարությունը, Մուհամմադի ու Ալիի միջև սկսված հակամարտությունը, քանի որ վերջինս «չէր հրաժարւում մարգարէության գործից» և մտադիր էր սպանել Մուհամմադին[45]: Պատմական իրողություններին չեն համապատասխանում նաև Մուհամմադի կողմից Երուսաղեմի գրավումը և հետագա նվաճումները, երբ նա «կիլիկիացիներից առավ Դարսիսը (Տարսոնը) եւ Ատանան, Մսիսը եւ Ասիան»[46]:

Մուհամմադի կրոնական գործունեության մասին բավականին ծավալուն նյութ կա «Ի Քաշունէ քաղածու» անունով պատմության մեջ՝

---

[40] **Թովմա Արծրունի,** նշվ. աշխ., էջ 174:

[41] Տե՛ս **Ղևոնդ**, նշվ. աշխ., էջ 56:

[42] «Պատմութիւն Ղեւոնդայ Մեծի վարդապետի հայոց», աշխատասիրութեամբ Կ. Եզեանցի, Ս. Պբ., 1887, էջ թ:

[43] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 53-55:

[44] «Պատմություն Անանուն զրուցագրի, կարծեցեալ Շապուհ Բագրատունի», Եր., 1971, էջ 55-56:

[45] Տե՛ս նույն տեղը, էջ 57-58:

[46] Նույն տեղում, էջ 71:

առաջին անգամ հրատարակված Բ. Կյուլեսերյանի կողմից, որն այդ տեքստը գտել է Երուսաղեմի մատենադարանում: Այն գրվել է 1273 թ. Նոր Գետիկում և Վանական վարդապետի (1191-1251 թթ.) «Հարցմանց գրքի» հնագույն օրինակն է[47]: Դժվար է ասել, երբ և ով է թարգմանել այս երկը, որի՝ Մուհամմադ մարգարեին վերաբերող հատվածները համընկնում են 12-13-րդ դարերի պատմագիր Մխիթար Անեցու պատմության հետ: Վերջինս հիշատակում է արաբական արշավանքների մասին՝ աղբյուր ունենալով Ղևոնդին, Հովհաննես Դրասխանակերտցուն, Սամուել Անեցուն, իսկ Մուհամմադ մարգարեին վերաբերող հատվածը, ըստ պատմագրի, նա քաղել է մի նախկին մուսուլմանի երկից, որ քրիստոնեություն է ընդունել Կրետե կղզում[48]:

Մխիթար Անեցին պատմում է Սարգիս Բահիրայի հետ Մուհամմադի հանդիպման մասին, որից վերջինս տեղեկանում է քրիստոնեության և հրեական կրոնի մասին: Պատմագիրը հակիրճ հիշատակում է Մուհամմադի կրոնական գործունեության մասին Մեքքայում և Մադինայում, և որ նա Քաաբա տաճարին Աբրահամի տուն անվանեց՝ «տունն զոր կոչ են Աբրահամու»[49], նշելով, որ այնտեղ երբեք չեն եղել Աբրահամն ու Իսմայելը, և որ այն իրավամբ «տուն կռոց ես աւձից պաշտման» է, որտեղ սնուցում են օձերին: Մխիթար Անեցին նշում է նաև Քաաբայի շուրջը գտնվող կուռքերի արձանների մասին, որոնց պաշտում էին տեղի բնակիչները, որոնք «զեռունս եւ զսողունս և զգազանս ոչ սպանանեն … յաղագս աւձից պաշտման», և Հազկերտի հրամանով մոգպետները Հայաստանում ևս օրինադրեցին օձերին չսպանել, քանի որ «աստվածք էին եւ պաշտամունք առ նոսա»[50]:

Մխիթար Անեցու պատմության մեջ ներկայացվում են նաև մահմեդական աղբյուրներում առկա զրույցները Աբրահամի մասին, որն այցելում է իր որդի Իսմայելին և, արժանանալով նրա կնոջ խիստ վերաբերմունքին, խնդրում է փոխանցել իր որդուն, թե «ոչ բարիոք են դրանք տան քո ի բաց փոխեա զդայ, այլ առնելով դուրս»: Իսմայելը, հասկանալով, թե ինչի մասին է խոսքը, նոր կնոջ կողմից բարեհաճ վերաբերմունքի արժանանալուց հետո, երբ վերջինս «թախանձէր զնա … իջեալ Աբրահամու, ոչ ի գետինն վասն երդմանն Սառայի, այլ մի ոտն ի վերայ վիմին եւ մի ոտն հեծնելոջն»[51]:

Պատմագիրն անդրադառնում է նաև մուսուլմանական միջավայրում տարածված զրույցներին, որ «որպէս վասն Քրիստոսի զուշակեցին մարգարէքն, այնպէս եւ զՄահմետայ գուշակեցան, նշանակելով զկոչումն մարգարեութեանն. Յիսուս իշով և սա ուղտով զԵսայեաց տե-

---

[47] Տե՛ս **Բ. Կյուլեսերյան**, Իսլամը հայ մատենագրության մեջ, մաս 2-րդ, Վիեննա, 1930, էջ 194-220:

[48] Տե՛ս **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Եր., 1983, էջ 97:

[49] Նույն տեղում, էջ 95:

[50] Նույն տեղում, էջ 97:

[51] Նույն տեղում, էջ 94:

սիլն առեալ իւրեանց վկայութիւնն»: Պատմագիրը քննադատաբար է մոտենում Մուհամմադի այն պնդմանը, թե «չի՛ք այլ Աստուած, բայց մին Աստուած ինքն միայն, և ո՛չ գոյ նորաց ընկեր, եւ Մահմեդ՝ ծառայ նորա եւ առաքեալ եւ մարգարե»[52]: Մխիթար Անեցին ներկայացնում է նաև մահմեդական աղբյուրներում առկա զրույցները Մուհամմադի կատարած հրաշագործությունների մասին:

Հայ միջնադարյան մի շարք մտածողներ ևս անդրադարձել են Մուհամմադի կրոնական գործունեությանը, նրա կողմից օրինադրված իսլամական կրոնի հիմնադրույթներին՝ քննադատական մոտեցում հանդես բերելով և համադրելով դրանք քրիստոնեության հիմնադրույթների հետ[53]:

Այսպիսով, ակնհայտ է այն փաստը, որ հայ միջնադարյան պատմագիրները իրենց տեղեկությունները Մուհամմադի մասին քաղել են մահմեդական բանավոր ու գրավոր աղբյուրներից, որոնց մասին նրանք չեն հիշատակում, բացի Մխիթար Անեցուց: Այդ տեղեկությունները արժանացել են հայ պատմագիրների սուբյեկտիվ վերաբերմունքին, քանի որ իսլամի որոշ հիմնադրույթներ ընդունելի չէին Հայոց եկեղեցու համար: Մուհամմադի կրոնական գործունեության վերաբերյալ պատմագիրների քննադատական վերաբերմունքը, մեր կարծիքով, հասկանալի է, քանի որ, ըստ մահմեդական աղբյուրների, Մուհամմադը գործունեության սկզբնական շրջանում իր հայրենի քաղաք Մեքքայում տեղի վերնախավի կողմից ենթարկվել է հալածանքների, մեղադրվեց որպես կեղծ մարգարե, դիվահար և խաբեբա: Եվ միգուցե հայ պատմագրության մեջ հիշատակված նմանատիպ տեղեկությունները որոշ չափով նաև մահմեդական պատմագրության արձագանքներ էին:

**Բանալի բառեր** – *իսլամի հիմնադիր, հայ պատմագիր, կեղծ մարգարե, մահմեդական պատմական ավանդություն, մարգարեական առաքելություն, կուրեյշ ցեղի վերնախավ, կուռքերի արձանիկներ, Աբրահամի տուն, մարգարեության կնիք*

**ГАЯНЕ МКРТУМЯН** – ***Средневековые армянские летописцы о пророке Мухаммеде.*** – В статье исследуются записи средневековых историографов о жизни и деятельности основателя ислама пророка Мухаммеда, в основу которых, по всей вероятности, легли устные и письменные мусульманские источники, в особенности «Житие Пророка» Ибн Хишама (IX в.). Через сопоставление соответствующих отрывков из армянских и мусульманских летописей материал всесторонне исследован и дополнен наблюдениями современных специалистов. В работе отмечено при этом критическое отношение армянских авторов к исламу и его пророку, обусловленное, помимо прочего, позицией Армянской церкви.

---

[52] Նույն տեղում, էջ 98:

[53] **Գրիգոր Տաթեւացի**, Ընդդէմ տաճկաց, Եր. 2005, **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, Եր. 2008, «Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն ժամանակագրական» Ս. Պետերբուրգ, 1867:

**Ключевые слова:** *основатель ислама, армянский историограф, лжепророк, мусульманская историческая традиция, миссия пророка, верхушка племени курейм, статуэтки-идолы, дом Авраама, печать пророчества*

**GAYANE MKRTUMYAN – *Armenian Medieval Chroniclers about Prophet Muhammad.* –** The present article examines the records of the Armenian medieval historiographers about the life and activities of the founder of Islam, Prophet Muhammad, which have most likely been based on the oral and written Muslim sources, especially the work of chronicler Ibn Hisham "The Life of the Prophet" of the 9th century. An attempt has been made to comprehensively present the studied material through comparing the relevant passages of the works of the Armenian and Muslim chroniclers, supplementing it with interesting observations of modern scholars on the given issue, at the same time mentioning the critical attitude of the Armenian chroniclers towards Islam and its prophet, which, among other things, was conditioned by the position of the Armenian Church.

**Key words**: *the founder of Islam, Armenian historiographer, false prophet, Muslim historical tradition, the mission of the prophet, the top of the Kureim tribe, statuettes-idols, Abraham's house, the seal of prophecy*

Ներկայացվել է՝ 06.09.2019
Գրախոսվել է՝ 25.03.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020